գրութիւն Կայսերական հրովարտակաց, զորս ետու յայս նուազ Հայոց եւ Յունաց 'ի հաստատութիւն հրովարտակացն Սէլիմայ, կամակորելով և զիմաստս նոցին չարաչար մեկնելով, անփոյթ եղեալ են զգործադրութենէ նոցին, որպէս եհաս յայս անգամ յականջս իմ. և զի Կայսերական կամքս իմ էր բան առ բան գործադրել զհրովարտակսն, զորս ետու 'ի հաստատութիւն հրովարտակացն Սէլիմայ, սակայն պաշտպանել միոյ կողման և հակառակիլ իմաստից հրովարտակացն գործ իմն է ընդդէմ Շէրիի օրինաց եւ Կայսերական կամաց։ Այլ 'ի մասին Բեթղեհէմի և գերեզմանի Ս. Աստուածածնի, ըստ պահանջման Շէրիի օրինաց երկու ազգք բաժանորդ լինելոյ եւ այսուհետեւ խաղաղ բառնալոյ զխռովութիւնն, տուան Կայսերական հրովարտակք. և յաղագս վարելոյ ըստ զօրութեան նոցին՝ յատկապէս Կայսերական դիւանէս գրեալ առաքեցաւ սոյն հրովարտակս։

Արդ՝ դուք որ Վէզիր, Դատաւոր, Մուվէլլայ եւ այլ ոմանք էք, Կայսերական հրամանս է, ընդունել և բառնալ 'ի դատարանէն Երուսաղէմի զարձանագրութիւնս հակառակ իմաստիւք գրեալ Հէօճէթից, զորս տուեալ են Դատաւորք վասն ագահութեան իւրեանց։ Զտալ հակառակ մեկնութիւնս հրովարտակաց, եւ չթիւրել զբարձրագոյն իմաստս նոցին, որք գրեցան համաձայն մտաց հրովարտակացն Սէլիմայ եւ չտալ կարեւորութիւն խռովութեանց պատահելոց յերկուց կողմանց։ Իսկ 'ի մասին Բեթղեհէմի և գերեզմանի Ս. Աստուածածնի ըստ պահանջման Շէրիի օրինաց՝ երկու ազգք բաժանորդ լիցին, չտալով համարձակութիւն խռովութեան վասն սոցին իրաց։ Կայսերական կամքս այս է՝ միաբանութեամբ ջանալ եւ փոյթ տանիլ բառ առ բառ գործադրութեան հրովարտակաց. չմիտել 'ի կողմն ագահութեան, չսիրել կաշառս և չլինել առիթ յարուցանելոյ նորանոր խռովութեանց, պաշտպան և տէր լինելով միոյ կողման։ Եւ եթէ փոքր ինչ չարժումն եւս եղիցի հակառակ հրովարտակին այնմիկ, այնպէս գիտասջիք թէ համարձակողաց և հրամայողաց անտարակոյս պատիժ և պատուհաս պատրաստեալ են, այլ առնել որպէս գրեցաւ, եւ զհրովարտակսն մշանջենաւոր բառ առ բառ